



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2020 թվականի N 2219

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 19/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ՄԱՌԱՆԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ
ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳԱԳԻԿ ՄԵԼՍԻԿԻ ԶԻԼԱՎՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գագիկ Մելսիկի Զիլավյանի լիազորված անձ Տարոն Արտուրի Վարդանյանի դիմումը, 08.07.2020թ. տրված թիվ 1251 (նոտարական ակտի կոդ: 843-20200708-90-4613259) լիազորագիրը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20112020-06-0028 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ, 34.2-րդ կետերով և 35-րդ կետի գ), դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 19/2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 33.7քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 32.56քմ) ավտոտնակը 57290 (հիսուկայնոթ հազար երկու հարյուր ինսուսուն) դրամով, 7.5քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 6.37քմ) մառանը 25500 (քսանհինգ հազար հինգ հարյուր) դրամով և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 117.0քմ մակերեսով հողամասը 223940 (երկու հարյուր քսաներեք հազար ինը հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Գագիկ Մելսիկի Զիլավյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Գագիկ Զիլավյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի, մառանի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻԿՈՒ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2020 թվականի N 2220

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ Հ. ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2-5-2 ԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2-5-2/3
ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՄԵՆ ՌԱՖԱՅԵԼԻ ՄԵՀՐԱԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՄԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ
ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Ռաֆայելի Մեհրաբյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27122019-06-0065 և թիվ 18112020-06-0016 վկայականները, ԱՐՏՅՈՒՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, 26.11.2020թ. տրված ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-տեղեկանքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Միավորել Վանաձոր քաղաքի Հ.Հակոբյան փողոց թիվ 2-5-2 և Հակոբյան փողոց թիվ 2-5-2/3 հասցեներում գտնվող Արմեն Ռաֆայելի Մեհրաբյանին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր 800.0քմ մակերեսով հողամասերը և 20.0քմ մակերեսով կիսակառույցը՝ համաձայն ԱՐՏՅՈՒՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Հակոբյան փողոց, թիվ 2-5-2 կիսակառույց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 11
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2020 թվականի N 2221

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ Գ. ՆԺԴԵՀԻ ԹԻՎ 12/2-3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ
ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՌՈՒՋԱՆՆԱ ՎՈԼՈՂՅԱՑԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ, ՀՐԱԶԻԿ
ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԵՎ ՕՀԱՆԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ, ԱՀԱՐՈՆ ՀՐԱԶԻԿԻ ՍԵԼԻՄՅԱՆԻՆ ԵՎ ՅԱՆԱ
ՀՐԱԶԻԿԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուզաննա Վոլոդյայի Թովմասյանի, Հրաչիկ Հովհաննեսի և Օհանի Թովմասյանի, Ահարոն Հրաչիկի Սելիմյանի և Յանա Հրաչիկի Թովմասյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26112020-06-0024 և Ռուզաննա Վոլոդյայի Թովմասյանի, Հրաչիկ Հովհաննեսի և Օհանի Թովմասյանի, Ահարոն Հրաչիկի Սելիմյանի և Յանա Հրաչիկի Թովմասյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07052020-06-0023 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Գ. Նժդեհի թիվ 12/2-3 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 3.2քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26112020-06-0024 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 14480 (տասնչորս հազար չորս հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ռուզաննա Վոլոդյայի Թովմասյանին, Հրաչիկ Հովհաննեսի և Օհանի Թովմասյանին, Ահարոն Հրաչիկի Սելիմյանին և Յանա Հրաչիկի Թովմասյանին՝ բնակելի տան ընդլայնման նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ռուզաննա Վոլոդյայի Թովմասյանի, Հրաչիկ Հովհաննեսի և Օհանի Թովմասյանի, Ահարոն Հրաչիկի Սելիմյանի և Յանա Հրաչիկի Թովմասյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքելու 3.2քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
 ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
 info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2020 թվականի N 2222

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2/6, ԹԻՎ 2/7 ԵՎ ՆԱՐԵԿԱԳՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/2-1 ԵՎ ԹԻՎ 2/5 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀՐԱՋԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ ՄԻՍԿԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԽՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԽՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հրաչիկ Կարապետի Միսկարյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14082020-06-0032, թիվ 14082020-06-0033, թիվ 14082020-06-0040 և թիվ 14082020-06-0042 վկայականները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 24.11.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-164/20 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով և 18-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կառավարության 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Միավորել Վանաձոր քաղաքի Թևոսյան փողոցի թիվ 2/6, թիվ 2/7 և Նարեկացու փողոց թիվ 2/2-1 և թիվ 2/5 հասցեներում գտնվող, Հրաչիկ Կարապետի Միսկարյանին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր 0.569053հա մակերեսով հողամասերը և դրանց վրա գտնվող շինությունները՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:
2. Ճանաչել օրինական Հրաչիկ Կարապետի Միսկարյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Թևոսյան փողոցի թիվ 2/6, թիվ 2/7 և Նարեկացու փողոց թիվ 2/2-1 և թիվ 2/5 հասցեներում գտնվող ինքնակամ կառուցված 393.52քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 386.71քմ) շինությունները և թվով 8 ինքնակամ ձևափոխումները:
3. Սույն որոշման 2-րդ կետում նշված 393.52քմ արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված խանութի օրինականացման համար սահմանված վճարը՝ 1003480 (մեկ միլիոն երեք հազար չորս հարյուր ութսուն) դրամ և թվով 8 ինքնակամ ձևափոխությունների համար 13600 (տասներեք հազար վեց հարյուր) դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի չիրագրած:
4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված գույքի իրավունքները փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Նարեկացու փողոց, թիվ 2/2-1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԿԱՐԵՆ ԱՍԼԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2020 թվականի N 2223

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 1/26-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՐՅՈՒՄ ԱՐԱՄԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20 ՄԱՅԻՍԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 695 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերյոժա Արամի Ստեփանյանի լիազորված անձ Արմեն Տիգրանի Ստեփանյանի դիմումը, 02.07.2020թ. թիվ 1455 (նոտարական ակտի կոդ: 741-20200727-64-4639045) լիազորագիրը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23112020-06-0052 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց 1-ին փակուղի թիվ 1/26-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 34.33քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը 32.6քմ) ավտոտնակը 58310 (հիսունույթ հազար երեք հարյուր տասը) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 34.0քմ մակերեսով հողամասը 65080 (վաթսունհինգ հազար ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սերյոժա Արամի Ստեփանյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Սերյոժա Ստեփանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 20 մայիսի 2010 թվականի «Սերյոժա Ստեփանյանի կողմից Ներսիսյան փողոցի թիվ 1/26 հասցեում հողին ինքնակամ ամրակցված, Վանաձորի համայնքային սեփականություն հանդիսացող ավտոտնակը և հողամասը տրամադրելու մասին» թիվ 695 որոշումը՝ 03.06.2010թ. ավտոտնակի վարձակալության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 285 պայմանագիրը համարելով անվավեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԲԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2020 թվականի N 2224

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/1 ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵԻ (ՆԱԽԿԻՆ ՇԻՐԱԿԻ
ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 17/1) ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԻԿՏՈՐՅԱ ՍՈՒՐԵՆԻ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՏԱՑԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վիկտորյա Սուրենի Հովհաննիսյանի (ծնված՝ 01.09.1953թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, Բաժանորդի էպիկրիզը, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 07.09.2020թ. թիվ 1753 (նոտարական ակտի կողմ: 843-20200907-88-4703889), թիվ 1754 (նոտարական ակտի կողմ: 843-20200907-88-4703634) և թիվ 1755 (նոտարական ակտի կողմ: 843-20200907-88-4703832) հայտարարությունները, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից 10.07.2020թ. տրված թիվ 01/222/1159-2020 գրությունը, 04.03.2020թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ-46/20 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված մասնագիտական եզրակացությունը, տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 1/1 պայմանական հասցեում (Նախկին Շիրակի խճուղի թիվ 17/1) կառուցված բնակելի տունը, բնակելի շինությունը և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 398.90քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերմիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1989թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 398.90քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1989թ.-ից: Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Վիկտորյա Սուրենի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 1/1 պայմանական հասցեում (Նախկին Շիրակի խճուղի թիվ 17/1) կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 398.90քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության շինության նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Փոխել Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 1/1 պայմանական հասցեի (Նախկին Շիրակի խճուղի թիվ 17/1) բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 398.90քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հոդերից՝ բնակելի կառուցապատման հոդերի:
4. Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 1/1 պայմանական հասցեի (Նախկին Շիրակի խճուղի թիվ 17/1) բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Նարեկացու փողոց, թիվ 3/7-6 բնակելի տուն:
5. Շինարարական աշխատանքներ կատարելու դեպքում համաձայնագրել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի հետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2020 թվականի N 2225

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի «ՎԱՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 82 ՈՐՈՇՄԱՆ
ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 20-ի «Վանաձոր համայնքի 2020 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 82 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 14
ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2020 թվականի N 2226

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 1089/417 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Ստեփանի Մկոյանի և Քրիստինե Ստեփանի Մկոյանի լիազորված անձ՝ Սիրուն Համբարձումի Ղումաշյանի դիմումը, 13.11.2020 թվականին տրված թիվ 77ԱԳ4541271 (նոտարական ակտի կոդ: 594-20201127-64-4818010) և 17.11.2020 թվականին տրված թիվ 61 ԱԱ 7645170 (նոտարական ակտի կոդ: 594-20201127-64-4816803) լիազորագրերի ռուսերենից հայերեն թարգմանությունները՝ ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոցի թիվ 21 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ Վանաձորի քաղաքապետի 1998 թվականի դեկտեմբերի 29-ի «Բնակարանի սեփականաշնորհման մասին» թիվ 1089/417 որոշման մեջ կատարել հետևյալ ուղղումները.

1. Որոշման 1-ին կետի աղյուսակում «Մկոյան Արթուր Ս.» բառերը փոխարինել «Մկոյան Արթուր Ստեփանի» բառերով:
2. Որոշման 1-ին կետի աղյուսակում «Մկոյան Քրիստինե Ս.» բառերը փոխարինել «Մկոյան Քրիստինե Ստեփանի» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻՆԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2020 թվականի N 2227

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 55 ՇԵՆՔԻ ԹԻՎ 4 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԱՔՍԻ ԱՇՈՏԻ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դիմաց» համատիրության նախագահ Ս. Թերզյանի 24.11.2020 թվականի թիվ 118/8509 գրությունը, Արաքսի Աշոտի Անդրեասյանի 08.07.2020 թվականի թիվ 067/3394 և 20.11.2020 թվականի թիվ 067/5895 դիմումները, Վանաձոր համայնքի ղեկավարի 22.12.2016 թվականի թիվ 615-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 1-ին կայացած նիստի թիվ 1 արձանագրությունը, ղեկավարվելով Վանաձորի համայնքի ավագանու 2006թ.-ի հուլիսի 21-ի «Լքված և թալանված բնակարանների հետագա տնօրինման մասին» թիվ 82-Ն որոշմամբ, 2006թ.-ի սեպտեմբերի 29-ի «Բազմաբնակարան շենքերում Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող լքված և թալանված բնակարանները որպես բնակելի տարածություն քաղաքացիներին հատկացնելու կարգը հաստատելու մասին» թիվ 104-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ և 7-րդ կետերով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Տիգրան Մեծի պողոտա թիվ 55 շենքի թիվ 4 բնակարանի բնակիչ Արաքսի Աշոտի Անդրեասյանի ընտանիքի 4 անդամներին հանձնել Աղայան փողոցի թիվ 73 շենքի թիվ 3 (երեք սենյականոց) լքված և թալանված բնակարանը 6 (վեց) ամիս ժամկետով և կնքել բնակարանի բարեկարգման աշխատանքների կատարման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՐԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2020 թվականի N 2228

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ Մ. ԳՈՇԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2/2-1, ԹԻՎ 3, ԹԻՎ 3-1 ԵՎ ԹԻՎ 3-2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԱՐԵՆ ՍԵՅՐԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՄԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ԽԱՆՈՒԹԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արեն Սեյրանի Գասպարյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12032020-06-0003, թիվ 12022015-06-0001 և թիվ 12032020-06-0022 վկայականները, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1902758 վկայականը, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի կողմից 25.11.2020թ. ներկայացված թիվ ՔՏՄ/09.2.4/14312-20 գրությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 30.04.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-67/20 Ի եզրակացությունը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով և 18-րդ կետի բ) ենթակետերով, ՀՀ կառավարության 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Միավորել Վանաձոր քաղաքի Մ. Գոշի փողոցի թիվ 2/2-1, թիվ 3, թիվ 3-1 և թիվ 3-2 հասցեներում Արեն Սեյրանի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող 0,004246հա մակերեսով հողամասը՝ համաձայն ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:
2. Ճանաչել օրինական Արեն Սեյրանի Գասպարյանի սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Մ. Գոշի փողոցի թիվ 2/2-1, թիվ 3, թիվ 3-1 և թիվ 3-2 հասցեներում գտնվող ինքնակամ կառուցված 40.56քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 35.44քմ) խանութը:
3. Սույն որոշման 2-րդ կետում նշված 40.56քմ արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված խանութի օրինականացման համար սահմանված վճարը՝ 210920 (երկու հարյուր տասը հազար ինը հարյուր քսան) դրամ գումարը, 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Մ. Գոշի փողոց, թիվ 3 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2020 թվականի N 2229

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 27 ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 16 ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԸ
(ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Սարգսի Գրիգորյանի դիմումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 27 ապրիլի 2020 թվականի թիվ 16 ավարտական ակտը (շահագործման թույլտվություն):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 14
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 դեկտեմբերի 2020 թվականի N 2230

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 29 ՄԱՅԻՍԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 677 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արշակ Ալբերտի Աղաբեկյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25112020-06-0003 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ**.

1. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքապետի 29 մայիսի 2008 թվականի «Արշակ Աղաբեկյանին հողամաս տրամադրելու մասին» թիվ 677 որոշումը՝ 30.05.2008թ. հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման (մրցույթով) թիվ 398 պայմանագիրը համարելով լուծված:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ կատարել Վանաձոր քաղաքի Տարոն-4 Կանակա թաղամաս 70/2 հասցեում գտնվող հողամասի վճարների վերահաշվարկ և վերջնահաշվարկ:

3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, տեղեկատվության և աշխատանքի բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը ուղարկել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 դեկտեմբերի 2020 թվականի N 2231

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 15-1/10, ԹԻՎ 15-1/11, ԹԻՎ 15-1/12, ԹԻՎ 15-1/13, ԹԻՎ 15-1/14 ԵՎ Մ.ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 17-2/1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՄԵՆ ԻՍՐԱԵԼԻ ԹԱՄՐԱԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՄԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Իսրաելի Թամրազյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06072016-06-0037, թիվ 06072016-06-0009, թիվ 06072016-06-0036, թիվ 06072016-06-0017, թիվ 06072016-06-0014 և թիվ 28102020-06-0011 վկայականները, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Միավորել Վանաձոր քաղաքի Գորկու փողոց թիվ 15-1/10, թիվ 15-1/11, թիվ 15-1/12, թիվ 15-1/13, թիվ 15-1/14 և Մ.Գորկու փողոց թիվ 17-2/1 հասցեներում գտնվող Արմեն Իսրաելի Թամրազյանին սեփականության իրավունքով պատկանող 78.65քմ ընդհանուր մակերեսով հողամասերը և 58.99քմ մակերեսով գույքը՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Մ.Գորկու փողոց, թիվ 15-1/10 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 15
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
 ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
 info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 դեկտեմբերի 2020 թվականի N 2232

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԶՈՐ.ԱՆՊՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 63 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
 ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
 ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարեն Հովհաննեսի Թումանյանի (ծնված՝ 01.09.1976թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՈՌՈԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Զոր. Անդրանիկի փողոց թիվ 63 (պայմանական) հասցեում կառուցված բնակելի տունը, շինությունները և դրանց գրառեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 400.0քմ ու այն գերազանցող 9.27քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերմիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1990 թ., բնակելի տան գրառեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 409.27քմ, որը գրառեցվել և շահագործվում է 1990թ.-ից սկսված: Դեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 9-րդ կետերով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Կարեն Հովհաննեսի Թումանյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Զոր. Անդրանիկի փողոց թիվ 63 (պայմանական) հասցեում գտնվող իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 400.0քմ հողամասի նկատմամբ, իսկ սահմանված 400.0քմ մակերեսը գերազանցող 9.27քմ մակերեսով չկառուցապատված հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարել Կարեն Հովհաննեսի Թումանյանին՝ դրա կադաստրային արժեքով՝ 27260 (քսանյոթ հազար երկու հարյուր վաթսուն) դրամով:
2. Ճանաչել Կարեն Հովհաննեսի Թումանյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Զոր. Անդրանիկի փողոց թիվ 63 (պայմանական) հասցեում գտնվող 409.27 (400+9.27) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Կարեն Հովհաննեսի Թումանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 9.27քմ մակերեսով հողամասի առավաճառքի պայմանագիր:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Վանաձոր քաղաքի Զոր. Անդրանիկի փողոց թիվ 63 (պայմանական) հասցեում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Զոր. Անդրանիկի փողոց, թիվ 63-1/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2233

ՎԱՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի զեկուցագիրը, ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ **որոշում եմ.**

Վանաձորի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցներին Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ խրախուսել միանվագ դրամական պարգևատրումով՝ յուրաքանչյուրի հաստիքային դրույքաչափին համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 16
ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2234

ՄԵԼՍԻԴԱ ԳԵՐԱՍԻՄԻ ԴՈԴՈՒՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ
ԵԶՐԱՓԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 24.11.2020 թվականին կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Մելսիդա Գերասիմի Դոդոյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 24.11.2020 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Մելսիդա Գերասիմի Դոդոյանը (հասցե՝ ք. Վանաձոր, Նաիրի փ., 13տ) Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց թիվ 6 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառուցել է քարե շինություն:

2020 թվականի նոյեմբերի 24-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2020 թվականի դեկտեմբերի 10-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով ծանուցվել էին վարչական վարույթի մասնակիցներ Մելսիդա Դոդոյանը, Ռոբերտ Մովսիսյանը և Ռուսլան Մարիկյանը: 26.11.2020 թվականին Մելսիդա Դոդոյանին ուղարկված ծրարը ետ է վերադարձել «մահացած» նշումով, իսկ Ռոբերտ Մովսիսյանին և Ռուսլան Մարիկյանին ուղարկված ծրարների հետադարձ ծանուցումները առկա չեն:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ վարչական ակտի ընդունումը հնարավոր է միայն այդ ակտի հասցեատիրոջն ի հայտ բերելու դեպքում:

Տվյալ դեպքում վարչական ակտի հասցեատեր է հանդիսանում Մելսիդա Գերասիմի Դոդոյանը, որին ուղարկված ծրարը ետ է վերադարձել «մահացած» նշումով:
Ուստի, վարչական մարմինը Մելսիդա Դոդոյանի մահվան հետևանքով պարտավոր է կասեցնել վարչական վարույթը՝ մինչև իրավահաջորդության հարցի լուծումը:

Սակայն գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները վարչական մարմինը հանգում է հետևյալին. Քանի որ Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց թիվ 6 հասցեում գտնվող հողամասը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19062019-06-0008 վկայականի համաձայն սեփականության իրավունքով պատկանում է Ռուսլան Մանվելի Մարիկյանին, իսկ Մելսիդա Գերասիմի Դոդոյանը կամ նրա իրավունքով պատկանում է Ռուսլան Մանվելի Մարիկյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ իրավահաջորդը Ռուսլան Մարիկյանին սեփականության իրավունքով պատկանող հողային վեճ և կառուցել են քարե շինություն, կողմերի միջև ծագել է տարաձայնություն, որը հանդիսանում է հողային վեճ և ՀՀ հողային օրենսգրքի 114-րդ հոդվածի համաձայն կարող է լուծվել դատական կարգով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ.

1. 24.11.2020 թվականին Մելսիդա Գերասիմի Դոդոյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը եզրափակել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
4. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով համայնքի ղեկավարին և դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2235

ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐ ՀԵՆՐԻ ՎԱՀԱԳՆ ԶԱՎԱՐՅԱՆԻ ԵՎ ԼԵՈ ՎԱՀԱԳՆ ԶԱՎԱՐՅԱՆԻ ՀԱՄԱՐ
ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԳՐԱՎ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ամուսիններ Վահագն Արկադիի Զավարյանի և Մարինե Սամվելի Հարությունյանի դիմումը՝ իրենց անչափափաս երեխաներին պատկանող գույքը գրավ դնելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020թ. դեկտեմբերի 15-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 19, կետ 8) և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Տարոն-4 Բելոռուսների փողոցի թիվ 9բ շենքի 6 բնակարանի բնակիչներ՝ Վահագն Արկադիի Զավարյանին (ծնված՝ 07.09.1986թ., նույնականացման քարտ՝ 004490421, տրված՝ 27.09.2014թ., 033-ի կողմից) և Մարինե Սամվելի Հարությունյանին (ծնված՝ 10.11.1991թ., տրված՝ 27.09.2014թ., 033-ի կողմից) և Մարինե Սամվելի Հարությունյանի (ծնված՝ 09.01.2018թ., ծննդյան իրենց անչափափաս երեխաների՝ Հենրի Վահագն Զավարյանի (ծնված՝ 09.01.2018թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 607269, տրված՝ 10.01.2018թ., Վանաձոր ՔԿԱԳ տ/բ-ի կողմից) և Լեո Վահագն Զավարյանի (ծնված՝ 15.01.2020թ., ծննդյան վկայական՝ ԲԱ 211308, տրված՝ 15.01.2020թ., Վանաձորի ՔԿԱԳ տ/բ-ի կողմից) համար ձեռք բերվող Վանաձոր քաղաքի Տարոն-4 Բելոռուսների թաղամասի թիվ 8ա շենքի 11 բնակարանի բաժնեմասը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 16
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2236

ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐ ՄԱՐԻԱ ՆԱՐԵԿ ԶԱՂԱՑՊԱՆՅԱՆԻ ԵՎ ԴԱՎԻԹ ՆԱՐԵԿ ԶԱՂԱՑՊԱՆՅԱՆԻ
ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ԳՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ) ԳՐԱՎ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ամուսիններ Արփինե Հովիկի Էլոյանի և Նարեկ Սեյրանի Զաղացպանյանի դիմումը
իրենց անչափափաս երեխաներին պատկանող գույքը գրավ դնելու մասին, Վանաձորի
համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020թ. դեկտեմբերի
15-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 19, կետ 10) և ղեկավարվելով ՀՀ
քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

Թույլատրել Վանաձոր քաղաքի Բաթումի փողոցի թիվ 15 շենքի 24 բնակարանի բնակիչներ Արփինե
Հովիկի Էլոյանին (ծնված՝ 31.08.1989թ., նույնականացման քարտ՝ 009430349, տրված՝ 22.05.2018թ.,
018-ի կողմից) և Նարեկ Սեյրանի Զաղացպանյանին (ծնված՝ 05.12.1984թ., նույնականացման քարտ՝
008743833, տրված՝ 31.05.2016թ., 018-ի կողմից) գրավ դնել իրենց անչափափաս երեխաների՝
Մարիա Նարեկ Զաղացպանյանի (ծնված՝ 06.09.2011թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 520294, տրված՝
22.09.2016թ., Վանաձոր ՔԿԱԳ տ/բ-ի կողմից) և Դավիթ Նարեկ Զաղացպանյանի (ծնված՝
23.06.2020թ., ծննդյան վկայական՝ ԲԱ 262816, տրված՝ 25.06.2020թ., Վանաձորի ՔԿԱԳ տ/բ-ի
կողմից) համար ձեռք բերվող Վանաձոր քաղաքի Բանյոյի փողոցի թիվ 4 շենքի 11 բնակարանի
բաժնեմասերը (գնման իրավունքը):

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2237

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՖԻԴԱՅԻՆՆԵՐԻ ՓՈԴՈՑԻ ԹԻՎ 54 Ա ՀԱՍՑԵ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ՀՈՎԻԿ ԽՈՐԵՆԻ ՊԱԼԹԱՋՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՁԵԼՈՒ ԵՎ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով Հովիկ Խորենի Պալթաջյանի (ծնված՝ 08.10.1964թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, Բաժանորդի էպիկրիզը, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 13.10.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-1 49/20 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Ֆիդայիների փողոցի թիվ 54 ա հասցեում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 398.60քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1989-2004թթ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 398.60քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1989թ.-ից:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Հովիկ Խորենի Պալթաջյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Ֆիդայիների փողոցի թիվ 54 ա հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 398.60քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության շինության նկատմամբ՝ բացառությամբ 15.05.2001թ.-ից հետո ինքնակամ կառուցված 138.45քմ արտաքին մակերեսով բնակելի տան 2-րդ հարկի:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Վանաձոր քաղաքի Ֆիդայիների փողոցի թիվ 54 ա հասցեի բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ֆիդայիների փողոց, թիվ 54/1-1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



2020թ. դեկտեմբերի 16
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
 ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
 info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2239

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱՁՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 16 ՀԱՍՅԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ
 ՆԱՐԻՆԵ ԴԵՐԵՆԻԿԻ ԿԱՐԴԱԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ
 ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարինե Դերենիկի Կարդալյանի (ծնված՝ 22.10.1964թ.) լիազորված անձ Սիրան Լևոնի Ամիրադյանի դիմումը, 11.02.2020թ. տրված թիվ 542 (նոտարական ակտի կոդ: 763-20200211-90-4458937) լիազորագիրը, 12.05.1992թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 17.08.2020թ. տրված սեփականության իրավունքի թիվ 2747 (նոտարական ակտի կոդ: 763-20200720-84-4628420), ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2748 (նոտարական ակտի կոդ: 763-20200720-84-4628318) վկայագրերը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ 29.01.2020թ. թիվ ԱՏ-29012020-06-0773 տեղեկանքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 16 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 85.72քմ մակերեսներով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1960-1990թ.թ-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի ընդհանուր մակերեսը փաստացի կազմում է 187.0քմ, որից 126.6քմ մակերեսով կառուցապատված հողամասը գտնվում է 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Նարինե Դերենիկի Կարդալյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 16 հասցեի օրինական 85.72քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 16 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Լազյան փողոց, թիվ 16-1/5 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2240

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 60-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Բաֆֆի Ռուբենի Գալստյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թրվ 09022015-06-0018 վկայականը, Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 06 նոյեմբերի 2020 թվականին տրված թիվ 80 ավարտական ակտը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ**.

1. Փոխել Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 60-1 հասցեում գտնվող 59.93քմ արտաքին մակերեսով կցակառույցի և թեքահարթակի գործառնական նշանակությունը՝ բնակելիից՝ որպես հասարակական գործառնական նշանակությամբ շինություն՝ խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



2020թ. դեկտեմբերի 16
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
 ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
 info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2241

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵԻ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ
 ՏԱՂԱՎԱՐԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ
 ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ
 ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովիկ Ալբերտի Մանուկյանի դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԱՐՏՅՈՒ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 2 հասցե հյուսիսային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 8.84քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 7.68քմ) տաղավարի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 81.25քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Փոխել Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 2 հասցե հյուսիսային մասում գտնվող տաղավարի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.008125հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի խառը կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կաղաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված տաղավարի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին տաղավարը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
6. Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 2 հասցե հյուսիսային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Նալբանդյան փողոց, թիվ 2-3/3 տաղավար:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2242

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԶԱՔԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8 ՇԵՆՔԻ ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ,
ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՏՍԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կլարա Վահանի Դանիելյանի դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Զաքարյան փողոց թիվ 8 շենքի հարավարևմտյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 18.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 16.84քմ) մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 18.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված մետաղական ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Զաքարյան փողոց թիվ 8 շենքի հարավարևմտյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Զաքարյան փողոց, թիվ 8-42/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2243

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ (ՆԱԽԿԻՆ ԺԴԱՆՈՎ ԹԱՂ.) 6-ՐԴ ՓՈԴՈՑ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԱԽԴԱ ԱՐՍԵՆԻ ԳԵՎՈՐԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անախդա Արսենի Գևորկյանի (ծնված՝ 06.02.1989թ.) դիմումը, 18.07.1989թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 20.10.2020թ. ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 4033 (նոտարական ակտի կոդ: 763-20201019-84-4771086) վկայագիրը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով թաղ.) 6-րդ փողոց թիվ 9 հասցեում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1194.1քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1948թ. և դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1194.1քմ: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Անախդա Արսենի Գևորկյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով թաղ.) 6-րդ փողոց թիվ 9 հասցեում գտնվող օրինական 1194.1քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության շինության նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով թաղ.) 6-րդ փողոց թիվ 9 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տավրոս թաղամաս, 6-րդ փողոց, թիվ 9 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2244

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 767 ԵՎ 25 ՄԱՐՏԻ 2004
ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 324 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից 16.10.2020թ. տրված թիվ
ԲԱ305456 մահվան մասին պետական վկայականը, անշարժ գույքի սեփականության
(օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1740785 վկայականը, ղեկավարվելով «Տեղական
ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ
իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքապետի 26 սեպտեմբերի 2003 թվականի «Լևոն
Պողոսյանին հողամաս տրամադրելու մասին» թիվ 767 և 25 մարտի 2004 թվականի «Վանաձորի
քաղաքապետի 2003թ. սեպտեմբերի 26-ի թիվ 767 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»
թիվ 324 որոշումները՝ 2004թ. կնքված թիվ 1898 սեղանամատյանում գրանցված հողատարածքի
վարձակալության պայմանագիրը համարելով լուծված:
2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի
կառավարման և գովազդի բաժնին՝ կատարել Վանաձոր քաղաքի Զաքարյան փող. 8/42^Ա հասցեում
գտնվող հողամասի վարձավճարների վերահաշվարկ և վերջնահաշվարկ:
3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, տեղեկատվության և աշխատանքի
բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը ուղարկել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային
ստորաբաժանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 16
ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
 ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
 info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2245

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ Գ. ՆԺՂԵԿԻ (ՆԱԽԿԻՆ ԷՆԳԵԼՍԻ) ՓՈԴՈՑԻ ԹԻՎ 46 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ
 ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՇՈՂԻՎ ՍԵՎԱՆԻ ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆԻ, ՎԱՀԱՆ ՍԱՄՎԵԼԻ
 ՊԱՐԶՅԱՆԻ ԵՎ ԱՐԵՎՀԱՏ ՍԱՄՎԵԼԻ ՊԱՐԶՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ
 ՆՈՐ ՓՈՍԱՑԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շողիկ Սևանի Չիլինգարյանի (ծնված՝ 28.06.1935թ.), Վահան Սամվելի Պարզյանի (ծնված՝ 11.03.1969թ.) և Արևհատ Սամվելի Պարզյանի (ծնված՝ 06.04.1963թ.) դիմումը, 20.06.1989թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 07.08.2020թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1481 (նոտարական ակտի կոդ: 843-20200807-84-4658465) վկայագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 18.11.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-158/20 Ի ՍՊԸ-ի կողմից 18.11.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-158/20 Ի ՍՊԸ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և եզրակացությունը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Գ. Նժդեհի (նախկին Էնգելսի) փողոցի թիվ 46 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 228.0քմ և կից 208.1քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1978-1989թ.թ-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 436.1քմ: Դեկլարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Շողիկ Սևանի Չիլինգարյանի (3/4), Վահան Սամվելի Պարզյանի (1/8) և Արևհատ Սամվելի Պարզյանի (1/8) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Գ. Նժդեհի (նախկին Էնգելսի) փողոցի թիվ 46 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 228.0քմ մակերեսով հողամասին կից 208.1քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել Շողիկ Սևանի Չիլինգարյանի (3/4), Վահան Սամվելի Պարզյանի (1/8) և Արևհատ Սամվելի Պարզյանի (1/8) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Գ. Նժդեհի (նախկին Էնգելսի) փողոցի թիվ 46 հասցեի 436.1քմ (228.0+208.1) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Վանաձոր քաղաքի Գ. Նժդեհի (նախկին Էնգելսի) փողոցի թիվ 46 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Գ. Նժդեհի փողոց, թիվ 46-1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2246

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՐԱԳԱՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, ԹԻՎ 2-1 ԵՎ ԹԻՎ 2/5 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԱՆՆԱ ՀԵՆՐԻԿԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ
ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աննա Հենրիկի Մովսիսյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27062018-06-0043, թիվ 27072018-06-0043 և թիվ 08042019-06-0012 վկայականները, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Միավորել Վանաձոր քաղաքի Մուրացանի փողոց թիվ 2, թիվ 2-1 և թիվ 2/5 հասցեներում գտնվող Աննա Հենրիկի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող 722.6քմ ընդհանուր մակերեսով հողամասերը և դրանց վրա գտնվող բնակելի նշանակության շինությունները՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Մուրացանի փողոց, թիվ 2-1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 16
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2247

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 1-11/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ՄԱՌԱՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ
ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՅԿԱԶԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովհաննես Հայկազի Եղիազարյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05102020-06-0043 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով, 35-րդ կետի գ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Իսահակյան փողոց 2-րդ նրբանցք թիվ 1-11/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 18.48քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 15.2քմ) մառանը 62840 (վաթսուներկու հազար ութ հարյուր քառասուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 26.4քմ մակերեսով հողամասը 50530 (հիսուն հազար հինգ հարյուր երեսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Հովհաննես Հայկազի Եղիազարյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Հովհաննես Հայկազի Եղիազարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել մառանի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 16
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2248

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱՎՎԱՐԻ ՓՈՂ ԹԻՎ 34 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՄ ԵԳՈՐԻ ՌՈՍՏՈՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արամ Եգորի Ռոստոմյանի (ծնված՝ 06.10.1994թ.) լիազորված անձ Ալֆրեդ Ալֆոնսի
Ղամբարյանի (ծնված՝ 19.07.1945թ.) դիմումը, 18.09.2019թ. տրված թիվ 5060 (նոտարական ակտի կոդ: 594-
20190918-90-4178550) լիազորագիրը, 20.01.1997թ. տրված սեփականության վկայագիրը, 08.05.1986թ.
տրված անհատական բնակելի տան տեխնիկական պասպորտը, անշարժ գույքի սեփականության
(օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1881055 վկայականը, 08.07.2020թ. տրված ըստ կտակի
ժառանգության իրավունքի թիվ 1650 (նոտարական ակտի կոդ: 594-20200707-84-4611990)
վկայագիրը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն,
որ Վանաձոր քաղաքի Լավվարի փող թիվ 34 հասցեում կառուցված բնակելի տունը, շինությունները և դրանց
զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 502.68քմ մակերեսով հողամասը չեն գտնվում
ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային
օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում
սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է մինչև 1997թ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար
անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 502.68քմ, որը ընդհանուր բաժնային
սեփականության իրավունքով՝ հավասար բաժիններով, պատկանում է Արամ Եգորի Ռոստոմյանին, Սերգեյ
Ռոստոմի Ռոստոմյանին և Էդիկ Մուշեղի Ռոստոմյանին: Արամ Եգորի Ռոստոմյանի բաժնեմասը կազմում է
167.56քմ (502.68:3): Դեկլարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ
հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի
տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն
որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով **որոշում եմ.**

1. Ճանաչել Արամ Եգորի Ռոստոմյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Լավվարի փող թիվ
34 հասցեում գտնվող օրինական 167.56քմ (502.68:3) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի
նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Վանաձոր քաղաքի Լավվարի փողոց թիվ 34 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային
հասցե՝ ք. Վանաձոր, Տավրոսի փողոց, թիվ 34/1, որնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2249

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 243 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱԼԵՐԻ ՎԱՆՈՒՇԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԵՎ ԱՐՄԻՆԵ ՎԱՆՈՒՇԻ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ
ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմինե Վանուշի Հովհաննիսյանի (ծնված՝ 08.04.1972թ.) լիազորված անձ Ասյա Օնիկի
Հովհաննիսյանի (ծնված՝ 10.03.1943թ.) և Վալերի Վանուշի Հովհաննիսյանի (ծնված՝ 08.07.1977թ.) դիմումը,
05.04.2019թ. թիվ 50 ԱԲ 2248432 (նոտարական ակտի կոդ: 763-20200204-64-4446903), 24.04.1965թ. տրված գույքային
թերթը, 17.10.2005թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 11461 վկայագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի
կողմից 16.03.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-55/20 Ի եզրակացությունը,
ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, հանրային ծառայություններ մատուցող
կազմակերպությունների եզրակացությունները և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 243
հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1058.0քմ և դրան կից 300.0քմ ու այն
գերազանցող 62.0քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն
գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների
օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը
կառուցվել է 1961-1992թ.թ-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի
կազմում է 1420.0քմ: Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 9-րդ կետերով, ՀՀ
քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը
չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ.
դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Արմինե Վանուշի Հովհաննիսյանի և Վալերի Վանուշի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը
Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 243 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ
օրինական 1058.0քմ մակերեսով հողամասին կից 300.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ, իսկ սահմանված 300.0քմ
հողամասը գերազանցող 62.0քմ մակերեսով չկառուցապատված հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարել Արմինե
Վանուշի Հովհաննիսյանին և Վալերի Վանուշի Հովհաննիսյանին՝ դրա կադաստրային արժեքով՝ 118670 (հարյուր
տասնութ հազար վեց հարյուր յոթանասուն) դրամով:
2. Ճանաչել Արմինե Վանուշի Հովհաննիսյանի և Վալերի Վանուշի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը
Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 243 հասցեի 1420.0քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի
նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի
բաժնին՝ Արմինե Վանուշի Հովհաննիսյանի և Վալերի Վանուշի Հովհաննիսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված
կարգով կնքել 62.0քմ մակերեսով հողամասի առավելագույնը համարվող կողմից հաստատված հատակագիծով:
4. Հողամասի սահմանները որոշվում են հավանական սահմանների կողմից հաստատված հատակագծով:
5. Հաստատել Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 243 հասցեի գտնվող գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր,
Երևանյան խճուղի, թիվ 243-1/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2250

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃ ԹԻՎ 107/43 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԿՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1930368 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Երևանյան խճ թիվ 107/43 հասցեում գտնվող, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 21.92քմ մակերեսով բնակելի գործառնական նշանակությամբ ավտոտնակը:
2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 22.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը օտարելու վերաբերյալ:
4. Վանաձոր քաղաքի Երևանյան խճ թիվ 107/43 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Ք. Վանաձոր, Երևանյան խճուղի, թիվ 107-43/1-ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2251


ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1926 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 26/11/2020թ. թիվ Կ-26112020-06-0073 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 1926 որոշումը՝ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**


Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հոկտեմբերի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Խորենացու փողոց թիվ 5/1 հասցեի հարավային մասում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը փոխելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1926 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 2-րդ կետում «5/1-5» թվերը փոխարինել «5/1-9» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



2020թ. դեկտեմբերի 16
Ք. Վանաձոր



በ ሶ በ ጅ በኩ ሆ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2252

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
 ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
 info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2253

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Վ. ՀԱՄԲԱՐԾՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 9-1/14-1 ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
 ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏԱՂԱՎԱՐԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
 ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏԱՐԿՄԱՐ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՏԱՂԱՎԱՐՆ
 ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հասմիկ Գրիշայի Համբարձումյանի դիմումը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «դ» ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Վ. Համբարձումյան փողոց, թիվ 9-1/14-1 հասցեում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 21.2քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 18.22քմ) տաղավարի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.00275հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված տաղավարի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված տաղավարի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին տաղավարը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Հաստատել սույն որոշման մեջ նշված գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Վ. Համբարձումյան փողոց, թիվ 9-1/14-1 տաղավար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2254

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂՅՈՒՍԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ
ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԻՆԵ ՀՐԱՆՏԻ ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարինե Հրանտի Հախվերդյանի (ծնված՝ 07.11.1954թ.) դիմումը, 12.11.1986թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 02.07.2014թ. տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 3735 վկայագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 19.11.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-157/20 Ի եզրակացությունը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Աղյուսագործների փողոց թիվ 2 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 300.0քմ և դրան կից 138.4քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1954-1990թ.թ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 438.4քմ:
Դեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Կարինե Հրանտի Հախվերդյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Աղյուսագործների փողոց թիվ 2 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 300.0քմ մակերեսով հողամասին կից 138.4քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել Կարինե Հրանտի Հախվերդյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Աղյուսագործների փողոց թիվ 2 հասցեի 438.4քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Վանաձոր քաղաքի Աղյուսագործների փողոց թիվ 2 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Աղյուսագործների փողոց, թիվ 2/1-3 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2255

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 30/55 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍԵՂԱ ԱՇԽԱՐՀՐԵԿԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՂԱՎԱՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՆՈՐ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեղա Աշխարհբեկի Մաթևոսյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29102015-06-0023 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286-Ն որոշման 46-րդ կետի դ) ենթակետով, Վանաձոր համայնքի ավագանու 23 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 175-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 1-ին կետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոց թիվ 30/55 հասցեում գտնվող, Սեղա Աշխարհբեկի Մաթևոսյանին սեփականության իրավունքով պատկանող տաղավարի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 20,0քմ մակերեսով հողամասի վարձավճարի չափը փոփոխել, նոր վարձավճար սահմանել և վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2030թ. սեպտեմբերի 24-ը:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Սեղա Աշխարհբեկի Մաթևոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 20,0քմ մակերեսով հողամասի վարձավճարի չափը փոփոխելու, նոր վարձավճար սահմանելու և պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ վարձավճարի չափը 1,0քմ մակերեսով հողամասի համար սահմանելով ամսական 600 (վեց հարյուր) դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2256

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԲԵԼԱՌՈՒՄՆԵՐԻ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 42/1-5/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ
ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԿ ԳԱԳԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայկ Գագիկի Պողոսյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22102020-06-0022 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով և 35-րդ կետի գ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Տարոն-4 Բելառումների թաղամաս թիվ 42/1-5/2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 5.65քմ մակերեսով պարիսպը 19210 (տասնինը հազար երկու հարյուր տասը) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 36.94քմ մակերեսով հողամասը 70710 (յոթանասուն հազար յոթ հարյուր տասը) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Հայկ Գագիկի Պողոսյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Հայկ Պողոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պարսպի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 16
ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2257

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 7-49/1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ
ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՔՐԻՍՏԻՆԵ ԻՍՄԵԼԻ ՀԵԿՈՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Քրիստինե Իսմելիի Շեկոյանի լիազորված անձ Սամվել Սիրականի Սողոյանի
դիմումը, 25.07.2019թ. թիվ 11251 (նոտարական ակտի կոդ: 444-20190725-79-4044110)
լիազորագիրը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական
գրանցման թիվ 23112020-06-0039 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ.
մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե)
ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց 1-ին փակուղի թիվ 7-49/1 հասցեում գտնվող, Վանաձոր
համայնքի սեփականությունը ճանաչված 24.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝
23.01քմ) ավտոտնակը 40800 (քառասուն հազար ութ հարյուր) դրամով և դրանով զբաղեցված ու
սպասարկման համար անհրաժեշտ 24.0քմ մակերեսով հողամասը 45940 (քառասունհինգ հազար
ինը հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Քրիստինե Իսմելիի Շեկոյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի
կառավարման և գովազդի բաժնին՝ Քրիստինե Շեկոյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված
կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



2020թ. դեկտեմբերի 16
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2258

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԹԱՂԱՄԱՍ ՄԵՔԵՆԱՇԽՆԱՐԱՐՆԵՐԻ ԹԻՎ 42/3-1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ
ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳԱՔՐԻԵԼ ԼԱՎՐԵՆՏԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գաբրիել Լավրենտի Սահակյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ
գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23112020-06-0056 վկայականը,
ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված
կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամաս Մեքենաշինարարների թիվ 42/3-1 հասցեում գտնվող,
Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 21.58քմ արտաքին մակերեսով (ներքին
մակերեսը՝ 19.24քմ) ավտոտնակը 36690 (երեսունվեց հազար վեց հարյուր իննսուն) դրամով և
դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 26.6քմ մակերեսով հողամասը 50920
(հիսուն հազար ինը հարյուր քսան) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Գաբրիել Լավրենտի
Սահակյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի
կառավարման և գովազդի բաժնին՝ Գաբրիել Սահակյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված
կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 16
Ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2259

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՍԿՈՎԱՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 14-13/13 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՀՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՅՐԱՆ ԿԻՄԻ ՀԱԿՈՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեյրան Կիմի Հակոբյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20112020-06-0001 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց թիվ 14-13/13 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 42.55քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը 39.44քմ) ավտոտնակը 110630 (հարյուր տասը հազար վեց հարյուր երեսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 47.05քմ մակերեսով հողամասը 212860 (երկու հարյուր տասներկու հազար ութ հարյուր վաթսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սեյրան Կիմի Հակոբյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Սեյրան Հակոբյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առովաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 16
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 2260

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐՔԱՆՑՔ (ՆԱԽԿԻՆ ՄԱՐՔՍԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ) ԹԻՎ 1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՍԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ԵՎ ՍԱՐԳԻՍ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՁԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեղա Հովհաննեսի Հովակիմյանի (ծնված՝ 20.09.1929թ.) և Սարգիս Սերյոժայի Հովակիմյանի (ծնված՝ 20.02.1964թ.) դիմումը, 02.04.1989թ. տրված անհատական բնակելի տան Հովակիմյանի (ծնված՝ 20.02.1964թ.) դիմումը, 02.04.1989թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11062018-06-0071 վկայականը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 31.08.2020թ. տրված սեփականության իրավունքի թիվ 1597 (նոտարական ակտի կող: 775-20200818-105-4673205), ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1599 (նոտարական ակտի կող: 775-20200818-84-4673388) վկայագրերը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-Ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց 1-ին նրբանցք թիվ 1 (նախկին Մոսկովյան փողոց 1-ին փակուղի) հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 96.0քմ և կից 15.30քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1948-1968թ.թ-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 180.7քմ, որից 138.8քմ մակերեսով հողամասը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով հավասար բաժիններով, պատկանում է Սեղա Հովհաննեսի Հովակիմյանին, Սարգիս Սերյոժայի Հովակիմյանին և կից տնատիրությանը՝ Արմեն Հովհաննեսի Գերյանին: Սեղա Հովհաննեսի Հովակիմյանի և Սարգիս Սերյոժայի Հովակիմյանի բաժնեմասը կազմում է 111.3քմ (41.9+138.8:2): Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ որոշում եմ.

